

II

ԱՂԳԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԳԻՈՒՄ

Յայտնի է, որ 1899 թուի վերջերից մեր երկու բարեգործական ընկերութիւնները—Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը և Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը վերակազմուեցան նոր սկզբունքների վրայ, որոնք նշանակուած են կառավարութեան հաստատած նոր կանոնադրութիւնների մէջ: Այդ նոր կանոններով յիշեալ երկու ընկերութիւնները այլ ևս առաջուայ նման չը պիտի ծախսեն իրանց միջոցների մեծ մասը կրթական գործի մամար, այսինքն ուսումնարաններին և ուսում առնողներին նիւթական օժանդակութիւն հասցնելու համար: Այժմ ընկերութիւնների առջև դրուած է միայն չքաւոր հայերին օգնելու հնարաւորութիւնը, այն էլ միայն այն չքաւոր հայերին, որոնք ապրում են այն քաղաքներում, ուր բացուած են ընկերութիւնները, այսինքն Թիֆլիսում և Բագուում:

Գործունէութեան շրջանը և նպատակները այժմ սահմանափակ են: Բայց դա դեռ չէ նշանակում, թէ երկու բարեգործական հաստատութիւնների գործը շատ թեթեւացրած է: Ընդհակառակն, եթէ առաջներում Բագուի Մարդասիրական Ընկերութիւնը միանգամից կազմում էր ուսումնարանների և ուսում առնողների ցուցակը, որոշում էր իւրաքանչիւրին յատկացնելի նպաստը (նկատենք՝ մեծ մասամբ շատ աննշան քանակութեամբ),—այժմ այլ ևս չէ կարելի բաւականանալ բարեգործութեան այդ հեշտ ձևով: Այժմ ընկերութիւնների առջև կանգնած է ժողովրդական կարիքը Կովկասեան երկու մեծ քաղաքներում—Թիֆլիսում և Բագուում: Մեծ, շատ մեծ է այդ կարիքը, և նրան կարելիին չափ վերացնելու համար ընկերութիւնները ունեն շատ միջոցներ. նրանք կարող են բաց անել ձրի և էփանագին ճաշարաններ, հիւանդանոցներ, աշխատանքի տներ: Անկասկած, այժմ աւելի շատ գործ և եռանդ է պահանջուում ընկերութիւններից՝ այդքան մեծ գործեր կատարելու համար:

Ո՞րքան կարողանում են մեր ընկերութիւնները իրանց նոր դիրքի համապատասխան գործունէութիւն ցոյց տալ:

Վերցնենք Բագուն: Արդիւնաբերական և առևտրական այդ խոշոր կենտրոնը դէպի իրան է քաշում մեծ քանակութեամբ մարդիկ, որոնք, անապահով դրութեան մէջ գտնուելով, որոնում են գործ և աշխատանք: Յայտնի է որ աղքատութիւնը ոչ մի տեղ այնքան սարսափելի կերպարանք չէ ընդունում, ինչպէս

այդ մեծ քաղաքում, ուր ամենափարթամ, չլացուցիչ հարստութեան, անմիտ զեղխութեան հետ միասին ապրում է և մի այնպիսի մերկութիւն, որից տեսնողի մազերը բիզ-բիզ են կանգնում: Այդպիսի մի տեղ Մարգարիտական Ընկերութիւնը ահանգիստ գործ ունի կատարելու: Եւ մենք չենք կարող բաւարար համարել նրա այն գործունէութիւնը, որի քննութեամբ էր զբաղուած անդամների ընդհանուր ժողովը մի քանի օր առաջ: Նախ և առաջ չենք կարող ցաւ չը յայտնել, որ ընկերութեան վարչութիւնը չէ ուղարկել իր տեղեկագիրը խմբագրութիւններին, որպէս զի կարելի լինի աւելի լիակատար պատկեր ներկայացնել: Ուստի մենք հարկադրուած ենք՝ բաւականանալ այն տեղեկութիւններով, որոնք երևացին լրագիրների մէջ. գլխաւորապէս «Մշակում»:

Մենք չը գիտենք թէ ընկերութիւնը մի տարուայ ընթացքում քանի անդամներ և ճրջան մուտք է ունեցել: Անդամների թիւը, ինչպէս երևում է, 300-ից աւել չէ, հետեալաւ մուտքի մէջ միայն 1500—1800 ուրբլի է մտնում այն անձիւններից, որոնք կամենում են միջոց տալ ընկերութեան՝ գործը առաջ տանելու: Դա մի շատ չնչին միջոց է, եթէ նկատի ունենանք Բագուն, այնտեղ հաւաքուած հայերի բազմութիւնը և նրկթական կարողութիւնը: Այնպէս որ ընկերութիւնը ստիպուած է, ինչպէս և առաջ, գործ տեսնել իր մայր գումարի տոկոսներով: Բարեբախտաբար, այդ մայր գումարը բաւական խոշոր է և ընկերութիւնը, միայն այդ հանգամանքի չնորհիւ, այնքան աղքատ չէ, որ չը կարողանայ փոքր ի շատէ ուշադրութեան արժանի գործ կատարել: Եւ այնպէս, կը նշանակենք նախ և առաջ այն հանգամանքը, որ Բագուի հայերը շատ էլ պարտաճանաչ չեն ընկերութեան վերաբերմամբ: Պէտք է աւելացնենք, որ մենք ներկայ տեսութեան մէջ նկատի չենք առնում ընկերութեան գրադարանը, թէ և չենք կարող անցողակի չը նկատել, որ այդ հիմնարկութիւնը պահպանելու համար նախաճաշուով նշանակուած է 5000 ուրբլի, բայց արդեօք այդքան էլ մուտք ստացւում է նրանից, թէ ընկերութիւնից է նպաստներ պահանջում: մի բան, որ չը պէտք է լինէր, ի նկատի ունենալով թէ գրադարանի հարստութիւնը և թէ Բագուի պէս մեծ քաղաքը:

Անցնելով ընկերութեան միւս գործերին, մենք նախ և առաջ պիտի արձանագրենք այն միանգամայն համակրելի հիմնարկութիւնը, որպիսին է ձրի ճաշարանը: Նա բացուած է 1900 թ. ապրիլի 20-ից և 8 ամսուայ ու 10 օրուայ մէջ տուել է 31520 բաժին ճաշ: Չէ կարելի չը ցանկալ, որ այդ հիմնարկութիւնը օրէցօր աւելի մեծանայ և աւելի մեծ գործունէու-

թիւն ցոյց տայ: Ընկերութիւնը ծրագրել է և աշխատանքի տուն, որի համար յատկացրել է 4000 ոտւրլի: Դա էլ խելացի օգնութեան մի միջոց է Բագուի աղքատների համար:

Թէ որքան մեծ է ընկերութեան նպատակներին կարօտ անձանց թիւը, երևում է նրանից, որ 1900 թ. ընթացքում վարչութիւնը ստացել է 1158 խնդրագիր՝ նպատակներ տալու համար: Այդ մեծ պահանջի դիմաց վարչութիւնը հարկադրուած է եղել խոստովանել իր անկարողութիւնը իր դրամական միջոցների պակասութեան պատճառով: Ահա այստեղ է, որ մենք պիտի անբաւարար համարենք վարչութեան գործունէութիւնը: Պակասում են միջոցներ՝ բոլոր թշուառների խնդիրքներին բաւարարութիւն տալու համար, բայց չը պիտի պակասէին. Բագուի հայ հասարակութիւնը պիտի հասկանայ այն սարսափելի դրութիւնը, որին ականատես է լինում վարչութիւնը հարկւրաւոր դէպքերում: Ահա այդ իրողութեան մի պատասխիլը, որ գտնում ենք պ. Դաւթեանի յօդուածներից մէկում.

«Քաղաքի յետ ընկած մասերում, զանազան Ռէ-ներ անուանուած խուղերում, մէկ-մէկու վրայ թափթփուած՝ բնակւում են ընտանիքներ, ամեն մի Ռէ-ում մի քանի ընտանիք, յաճախ բոլորովին օտար, անծանօթ ընտանիքներ: Այդ Ռէ-ներում գուք տեսնում էք և՛ ծեր, և՛ երիտասարդ, և՛ պոռաւ երկուտակած սկեսուր, և առողջ-մատաղահաս հարս, ամուրի, ձեռքից կամ ոտքից զրկուած երիտասարդ, 15—16 տարեկան ծաղկափթիթ օրիորդներ, պատանիներ, ծծկեր երեխաներ և նոյն իսկ երկուքի ենթակայ դարձած, երեսները ծածկած, անկիւններում կուշ եկած կանայք: Դրանք, բազդի այդ խաղալիքները, մերկ յատակի վրայ թափթփուած, քնում են միասին, առանց տեղաչորի... Կեղտն ու գարշահոտութիւնը լրացնում են ամեն ինչ: Աւելացրէք դրանց վրայ և հիւանդներ, մի կտոր թաղիքի տակ կծկուած զառամեայներ, որոնք հազիւ հազ գլուխ վեր քաշած՝ օգնութիւն են հայցում, արտասուածոր աչքերով աղաչում-պաղատում են ազատել «այս դժոխքից», ճանապարհ գցել, որպէս զի կարողանան ցանկացած ժամանակ գոնէ «պաղ», «յտակ» ջուր խմել... Ի՜նչ սիրտ կարող է չը մղկտալ, որպիսի գութ կարող է չը շարժուել լսելով այդպիսի խօսքեր»:

Բայց և այնպէս, մղկտացող սրտեր, շարժուող գութ շատ չը կան Բագուում: Ապացոյց—300 անդամները...

Ո՛չ, Մեր բարեգործական ընկերութիւնները այժմ այնպէս չը պիտի լինեն, ինչպէս եղել են: Այժմ նրանք մոցրուած են ժողովրդական կարիքների և ցաւերի մէջ և ունեն գործունէութեան շատ լայն ասպարէզ, հետևաբար և մեծ պատասխանա-

տուութիւն են վերցրած իրանց վրայ: Հարկաւոր են աւելի մեծ նիւթական միջոցներ: Իսկ այդ կողմէն ընկերութիւնների ապահովութիւնը մենք չենք կարող որոնել միայն անշարժ գրամագլուխների տոկոսների մէջ, այլ այն կենդանի և աշխոյժ համակրութեան մէջ, որ հասարակութիւնը ցոյց կը տայ նրանց վերաբերմամբ: Անդամների թիւն է այդ համակրութեան չափը: Եւ որովհետեւ Մարդասիրական Ընկերութեան անդամները այնքան քիչ են, ուստի կարող ենք ասել, որ Բագուի հայ հասարակութիւնը դեռ մեռած ու անզգայ է այն սարսափելի իրականութեան դիմաց, որի մի փոքրիկ նմուշը բերինք վերևում...

Ա.